




## Միջոցառման նկարագիր

© «Երևանի Գինու Օրեր» փառատունը երևանյան ամենաապասված իրադարձությունն է: Յուրաքանչյուր տարի քաղաքի սրտում մեկտեղում ենք լավագույն հայկական գինիներն ու երաժշտությունը, բարձր տրամադրությունն ու համեղ խորտիկները: Այդ օրերին հայկական տասնյակ ընկերությունների պատրաստած գինին փորձելու համար Երևանի կենտրոնական փողոցներ են գալիս ոչ միայն քաղաքի բնակիչները, այլև բազմաթիվ գինեսերներ մարզերից և աշխարհի տարբեր երկրներից:

Հայկական գինու, գինու տուրիզմի կարևորությունն ու ամբողջ գունապնակը ներկայացնող, ամենաջերմ էմոցիաները պարզևող, Հայաստանի զբոսաշրջության և գինեգործության զարգացման մեջ կարևոր տեղ զբաղեցնող ©«Երևանի Գինու Օրերը» տեղի կունենա արդեն ավանդական դարձած տարածքում՝ Մոսկովյան-Սարյան-Թումանյան փողոցների խաչմերուկում:

 Հունիսի 2, 3, 4

 Ժամը 16:00-ից մինչև 22:30:

 Փառատունից առավելագույնը ստանալու համար ձեզ անհրաժեշտ է «Գինին վայելելու փաթեթը»:

### «Գինին վայելելու փաթեթը» ներառում է՝

- *Գինու բաժակ՝ լոգոյով*
- *12 կտրոն*
- *Երկտեղանի գինու պայուսակ*
- *Տեղեկատվական գրքույկ՝ ռեստորանների զեղչային կտրոններով*
- *Տեղեկատվություն մասնակից գինի ներկայացնող ընկերությունների մասին*
- *Հատուկ առաջարկներ և նվերներ գործընկերների կողմից*
- *Խաղարկություն գործընկերների կողմից*
- *Նախընտրելի գինիների մասին նշումների հատուկ էջեր*
- *Գինեդասերին, գաստոր շուրին և աուդիո թատրոնին մասնակցելու հնարավորություն*

«ԷվենտՏուրա» ընկերությունը «Երևանի Գինու Օրեր 2023» փառատունի շրջանակում թողարկել է հատուկ ՆՎԵՐ ՔԱՐՏԵՐ:

Գնորդը կարող է «Գինին Վայելելու Փաթեթի» փոխարեն ընտրել համարժեք նվեր քարտը, որը ներկայացնելով միջոցառման օրը ՆՎԵՐ ՔԱՐՏԻ վաճառքի ՀԱՏՈՒԿ տաղավար կստանա փաթեթը կամ այն կառաքվի միջոցառմանը մոտ օրերին:

## «Գինին վայելելու փաթեթ» -ի նվեր-քարտը ներառում է՝

- *Նվեր – բացիկ*
- *Նվեր – քարտ*
- *Նվեր – քարտից օգտվելու տեղեկատվական թերթիկ*

## Նվեր-քարտի վավերապայմաններ

### **Նվեր քարտի ստացող**

- Այս քարտը Ձեզ հնարավորություն է տալիս ստանալ «Գինին Վայելելու Փաթեթը» «Երևանի Գինու Օրեր» փառատոնի ընթացքում՝ նախաժամառքի տաղավարից 02.06-04.06.2023թ., ժամը 16:30-22:00:
- «Գինին Վայելելու Փաթեթի» առաքումը քաղաք Երևանում 1800 դրամ է: Առաքումն իրականացվելու է՝ 22.05-27.05.2023թ., ժամը 11:00-20:00-ն: «Գինին Վայելելու Փաթեթի» առաքումը Երևանից դուրս կկազմի տվյալ պահին գործող առաքման ծառայության գինը:
- Նվեր Քարտը չի հանդիսանում ապրանք, այն վերադարձման և փոխանակման ենթակա չէ: Նվեր Քարտի համար նախապես վճարված գումարը հնարավոր չէ կանխիկացնել, այն հնարավոր է օգտագործել միայն «Գինին Վայելելու Փաթեթ» ձեռք բերելու համար:
- Նվեր Քարտի վավերականության ժամկետը ձեռքբերման պահից սահմանվում է մինչև 04.06.2023թ. -ը ժամը 22:00-ն: Նվեր Քարտի վավերականության ժամկետի ավարտից հետո չօգտագործված նվեր քարտի արժեքը ենթակա չէ վերադարձման:
- Նվեր քարտը մեկ անգամյա օգտագործման է, խնդրում ենք չկորցնել այն:
- ԷվենտՏուրա ընկերությունը պատասխանատվություն չի կրում կորցրած նվեր քարտի համար: Կորցնելու դեպքում հաճախորդն իրավունք չի ունենում այն օգտագործելու նվեր քարտի պատճենի, նկարի, կողի իմացության դեպքում: Փաթեթը կարող էք ստանալ ՄԻԱՅՆ նվեր քարտի անկայության դեպքում:
- Նվերի տեսակի հետ կապված հակասությունների առաջացման դեպքում նվեր քարտի հետ առկա թուղթիկը ներկայացնելը պարտադիր է:

### **Նվեր քարտի գնորդ**

- Նվեր քարտ կարող էք գնել մինչև 27.05.2023թ.:
- Առաքումն իրականացվում է **նվեր քարտը գնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, ժամը՝ 11:00-20:00 (այս ժամկետները փոփոխում էք դուք):** Առաքման հասցեն ձեր կողմից նշված մեկ հասցեն է:
- Նվեր քարտ ստացողի պայմանները ենթակա են պարտադիր ընթերցման:

## «Գինին վայելելու փաթեթի» և Նվեր-քարտի վաճառքի 2 փուլերը՝

- Մինչև 28.02.23՝ 9,000 դրամ
- 01.03 – 24.05.23՝ 12,000 դրամ